

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ
IV ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ Լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ պարբերաշրջանի 4-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Չորրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Չորրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. հոկտեմբերի 18-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. հոկտեմբերի 19-ին:

ՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեգր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2020Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼ
ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հարց 1. 20 000 000 ՀՀ դրամ արժողությամբ 01.10.2020թ.-ին ձեռքբերված վարչական շենքի գծով 31.12.2020թ.-ին մաշվածության գծով ծախսը առավելագույնը կարող է կազմել՝

- ա) 250 000.
- բ) 500 000.
- գ) 5 000 000:

Հարց 2. Որքա՞ն է կազմում տեխնոլոգիական կորստի շահութահարից նվազեցման առավելագույն չափը՝

ա) համախառն եկամտի 1 տոկոսի չափով.

բ) նման չափ սահմանված չէ, փաստացի կորստի չափով.

գ) տեխնոլոգիական կորուստները շահութահարկից նվազեցման ենթակա չեն.

դ) բոլոր պատասխանները սխալ են:

Չարց 3. ԵԱՏՍ անդամ երկրներից ներմուծված ապրանքը ՀՀ պետական սահմանը հատել է 01.07.2020թ.-ին, սակայն կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը անցել է 10.07.2020թ., որի մասով սահմանված հարկով ներմուծման հայտարարագիրը ներկայացրել է 31.07.2020թ.-ին, հայտարարություն՝ 01.08.2020թ.-ին: Չարկման բազան որոշելու համա ո՞ր օրվա փոխարժեքը պետք է հիմք հանդիսանա՝

ա) 01.07.2020թ.,

բ) 10.07.2020թ.,

գ) 31.07.2020թ.,

դ) 01.08.2020թ.:

Չարց 4. Նշված ակտիվներից որը չի դասակարգվում որպես ընթացիկ՝

ա) առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները.

բ) առևտրական նպատակներով պահվող պաշարները.

գ) հետաձգված հարկային ակտիվը.

դ) անավարտ արտադրանքը:

Չարց 5. Նշված ակտիվներից որն է դասակարգվում որպես ընթացիկ՝

ա) վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված և կապիտալացված ծախսումները, որոնք ակնկալվում է, որ կփոխհատուցվեն ավելի քան մեկ տարի հետո.

բ) անավարտ արտադրանքը, որը ակնկալվում է, որ պատրաստի արտադրանք կդառնա ավելի քան մեկ տարի հետո.

գ) հիմնական միջոցը, որի արժեքը 50.000 դրամից պակաս է

դ) հիմնական միջոցը, որի արժեքը 25.000 դրամից պակաս է:

Չարց 6. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

ա) առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար.

բ) նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով.

գ) նախատեսվում են օգտագործել մեկ և ավելի գործառնական փուլերի ընթացքում և իրենց արժեքը մաս-մաս փոխանցում են ստեղծվող արտադրանքին.

դ) միաժամանակ բավարարում են «ա» և «բ» կետերի պահանջներին:

Չարց 7. Իրացման զուտ արժեքը որոշելիս նշված ծախսումներից որո՞նք են հանվում սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գնից՝

ա) վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները.

բ) վարչական վերադիր ծախսումները.

գ) պաշարների համալրման ծախսումները.

դ) «ա» և «գ» կետերում նշվածները:

Հարց 8. Դուստր ընկերության կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման արտացոլում`

- ա) Դեբետ 141
 Կրեդիտ 252.
- բ) Դեբետ 232
 Կրեդիտ 252.
- գ) Դեբետ 142
 Կրեդիտ 252:

Հարց 9. Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվների` իրական արժեքով վերաչափումից արժեքի աճի արտացոլում`

- ա) Դեբետ 143
 Կրեդիտ 321.
- բ) Դեբետ 143
 Կրեդիտ 726.
- գ) Դեբետ 143
 Կրեդիտ 322:

Հարց 10. Դեբիտորական պարտքի վերաձևակերպում որպես երկարաժամկետ փոխառություն`

- ա) Դեբետ 145
 Կրեդիտ 221.
- բ) Դեբետ 221
 Կրեդիտ 412.
- գ) Դեբետ 412
 Կրեդիտ 221:

**«2020Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼ
ԽՆԴԻՐԸ**

«ԷՅ-ԷՖ ԲԻ» ԲԲԸ-ն ստեղծվել է 2019թ. հունվարի 10-ին: Ստեղծման օրվանից աշխատել է հարկման ընդհանուր դաշտում: 2019թ. ընթացքում զբաղվել է շինարարական աշխատանքներով, ինչպես նաև շինարարական նյութերի մանրամեծածախ վաճառքով:

2019թ. ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները

Եկամուտներ /հազ. դրամ/

Հ/Հ	Գործարք	գումար
1.	Աշխատանքների կատարումից եկամուտ	85 000
2.	Նյութերի մեծածախ վաճառք /առանց ԱԱՀ/	30 000
3.	Նյութերի մանրածախ վաճառք /ԱԱՀ ներառյալ/	72 000
4.	Հողի վարձակալությունից	8500
5.	Պետությունից ծրագրի իրականացման նպատակով ստացված գումար	90 000
6.	Դատական կարգով բաց թողնված օգուտի վերականգնում	12000
	ԸՆԴԱՄԵՆՆՆԸ` Եկամուտ	297 500

Ծախսեր /հազ. դրամ/

Հ/Հ	գործարք	գումար
1	Աշխատավարձի գծով ծախսեր	65 000

2	Գործուղման ծախսեր՝ շինարարական աշխատանքների գծով	12 000
3	Հունքի վաճառքն իրականացնելու ժամանակ կատարվել են տրանսպորտային լրացուցիչ ծախսեր	3000
4	Աշխատողների մի մասը ունեն հաշմանդամության կարգ և այդպիսի աշխատողների աշխատավարձը կազմել է ԱՎՈԻՄ-ի 15 %	9750
5	Բանկային տոկոսների գծով ծախս	4500
	Ընդամենը՝ ծախսեր	94250

Լրացուցիչ տվյալներ՝

- Վաճառված հունքի հավելագինը կազմել է 15 տոկոս:
- Եկամուտների 4-րդ տողով նշված վարձակալությունից եկամուտը ստացվել է նույն հաշվետու ժամանակաշրջանում 90 000 հազ. ՀՀ դրամ գույքի ձեռքբերումից: Այդ գործարքը տեղի է ունեցել 15.04.2019թ.-ին:

Պարզել 2019 թվականի արդյունքներով ձևավորվող զուտ շահույթը և շահութահարկը:

Պատասխան՝

Զ/Զ	գործարք	գումար	
1	Աշխատանքների կատարումից եկամուտ	85 000	85000
2	Նյութերի մեծածախ վաճառք /առանց ԱԱՀ/	30 000	30000
3	Նյութերի մանրածախ վաճառք /ԱԱՀ ներառյալ/	72 000	60000
4	Հողի վարձակալությունից	8500	8500
5	Պետությունից ծրագրի իրականացման նպատակով ստացված գումար	90 000	0
6	Դատական կարգով բաց թողնված օգուտի վերականգնում	12000	12000
	Ընդամենը եկամուտ	297 500	195500

Ծախսեր /հազ. դրամ/

Զ/Զ	գործարք	գումար	
1	Աշխատավարձի գծով ծախսեր	65 000	65000
2	Գործուղման ծախսեր՝ շինարարական աշխատանքների գծով	12 000	12000
3	Հունքի վաճառքն իրականացնելու ժամանակ կատարվել են տրանսպորտային լրացուցիչ ծախսեր	3000	3000
4	Աշխատողների մի մասը ունեն հաշմանդամության կարգ և այդպիսի աշխատողների աշխատավարձը կազմել է ԱՎՈԻՄ-ի 15 %	9750	14625
5	Բանկային տոկոսների գծով ծախս	4500	4500
6	Հունքի ինքնարժեք	78261	78261
	Ընդամենը ծախս		177368

Պատասխան՝

Համախառն եկամուտ՝ 195500, նվազեցման ենթակա ծախս՝ 177368, շահույթ՝ 18132, շահութահարկ՝ 3626, զուտ շահույթը հարկումից հետո՝ 14506: